Իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների բանկային (Մաստեր) հաշվի բացման և սպասարկման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմանները /այսուհետ՝ Պայմաններ/ կարգավորում են, «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ և հաշվի բացման Պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ ստորագրող իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատիրոջ, միջև իրականացվող բանկային հաշվի սպասարկման և հաշվին կից վճարային բիզնես քարտի (այսուհետ՝ Քարտ), Բանկ-Հաճախորդ Համակարգի (այսուհետ՝ Համակարգ) տրամադրման և օգտագործման հետ կապված պայմանագրային հարաբերությունները:

«Հաճախորդ», «Դուք», «Ձեր» և «Ձեզ» բառերը վերաբերում են Բանկի կողմից բացված բանկային հաշիվները տնօրինող Իրավաբանական անձանց/ անհատ ձեռնարկատերերին:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ», «Բանկ», «Մենք», «Մեր» և «Մեզ» բառերը վերաբերում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը:

1.2. Պայմանները հանդիսանում են Բանկի ներքին փաստաթուղթ, ինչը Մեր հրապարակային առաջարկն (օֆերտա) է՝ կնքելու Պայմանագիր՝ Մեր կողմից հաստատված Պայմանների և իրավաբանական անձանց/ անհատ ձեռնարկատերերի համար Բանկում գործող սակագներին (այսուհետ՝ Սակագներ) և ներքին իրավական ակտերին համաձայն: Սակագները և Պայմանները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

1.3. Պայմանագրի, բանկային հաշվով գործառնությունների իրականացման, և նմանատիպ այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը սահմանվում են Մեր կողմից միակողմանիորեն և կարող են պարբերաբար փոփոխվել:

1.4. Բանկային հաշվի գծով տարեկան տոկոսադրույքների փոփոխությունը կարող է կատարվել Մեր կողմից՝ միակողմանիորեն: Մեր կողմից բանկային հաշվին վճարվելիք տոկոսագումարների չափի նվազեցման դեպքում նոր տոկոսադրույքը սկսում է կիրառվել Ձեր տոկոսադրույքի նվազեցման մասին ծանուցման պահից 15 օր հետո, եթե Բանկային ավանդի պայմանագրով այլ բան սահմանված չէ:

1.5. Ձեր բոլոր բանկային հաշիվների մնացորդները, դրամական մուտքերը և հաշվեգրվելիք տոկոսագումարները համարվում են Ձեր՝ Մեր նկատմամբ բանկային հաշվի սպասարկման կապակցությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով առաջացած (այդ թվում՝ տոկոսների, միջնորդավճարների և այլ վճարների) պարտավորությունների (ներառյալ՝ վարկային) ապահովում: Մենք իրավունք չունենք բանկային հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Ձեր իրավունքները սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերի և դեպքերի, երբ Ձեր բոլոր տիպի հաշիվներում առկա և մուտքագրվող դրամական միջոցները հանդիսանում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց, և առանց Մեր գրավոր համաձայնության բանկային հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները գրավ դնելուց:

1.6. Դուք իրավունք չունեք առանց Մեր գրավոր համաձայնության բանկային հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները գրավ դնել:

1.7. Մենք իրավունք ունենք առանց Ձեզ նախապես տեղեկացնելու, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, այլ բանկերին և վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին (անհատ ձեռնարկատիրոջ մասով) և այլ իրավասու մարմինների՝ վերջիններիս պահանջով կամ Մեր նախաձեռնությամբ տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկություններ:

1.8. Սույն Պայմանների և Պայմանագրի ուժով Դուք տալիս եք Ձեր լիարժեք համաձայնությունը կատարել հարցում վարկային բյուրոյին կամ ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ Ծառայություն և ստանալ Ձեր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների, Ձեր անհատական հաշվի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև անհատական տվյալներ (աշխատանքի վայրի, աշխատանքային գործունեության ժամանակահատվածի, եկամուտների մասին), ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Մեր կողմից կարող են հաշվի առնվել Ձեր հետ հետագայում վարկային պայմանագրի կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

1.9. Պայմաններում նախատեսված կանոնները կիրառվում են Ձեր բոլոր բանկային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ տվյալ հաշվի համար սահմանված կանոններով և/կամ Մեր և Ձեր միջև ստորագրված գրավոր համաձայնությամբ:

1.10. Դուք երաշխավորում եք, որ Ձեր բոլոր տիպի հաշիվներում առկա և մուտքագրվող դրամական միջոցները չեն հանդիսանում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, հաշիվը որևէ կերպ չի օգտագործվելու հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման համար (ՀՀ Քրեական օրենսգրքի 190 և 217.1 հոդվածներով նախատեսված արարքներ):

1.11. Ձեր կողմից Ձեր բանկային հաշվով գործառնություններ կատարելու և/կամ Մեր կողմից մատուցվող այլ ծառայություններ ստանալու կապակցությամբ Մեզ ներկայացվող ցանկացած փաստաթղթի կապակցությամբ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մենք իրավունք ունենք նշված փաստաթղթերն ուղարկել համապատասխան լիազոր մարմինների փորձաքննությանը՝ իսկությունը պարզելու համար: Մենք որևէ պատասխանատվություն չենք կրում այդ կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով Ձեր կրած վնասների համար:

1.12. Ի կատարումն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ նորմատիվ և/կամ Մեր ներքին իրավական ակտերի պահանջների Մենք իրավունք ունենք Ձեզանից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը՝ բանկային հաշիվ բացելու, բանկային հաշվով

կատարվող գործարքների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում՝ հրաժարվել բանկային հաշիվ բացելուց, բանկային հաշվով գործարքներ կատարելուց:

1.13. Բանկի տեսակետից բանկային հաշվով արտասովոր կամ կասկածելի գործառնություններ կատարելու դեպքում Մենք իրավունք ունենք Ձեզանից պահանջել տվյալ գործառնությունները հիմնավորող փաստաթղթեր (հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր և այլն):

1.14. Մենք իրավունք ունենք կասեցնել, դադարեցնել Ձեր հաշվով իրականացվող գործառնությունները, եթե Դուք Բանկի տեսակետից ողջամիտ ժամկետում չեք ներկայացնում սույն Պայմանների 1.12 և 1.13 կետերում նշված փաստաթղթերը:

1.15. Դուք պարտավոր եք Բանկ ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, և/կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված պատճենները, եթե դա պահանջվում է Բանկի կողմից, ընդ որում Մենք իրավունք ունենք պատճենել դրանք կամ պահել բնօրինակը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

1.16. Դուք պարտավոր եք Բանկ ներկայացնել հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերում, ինչպես նաև Ձեր կողմից Բանկին տրամադրված այլ տեղեկատվության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, վերջիններիս կատարման օրվանից 10 (տաս) օրացուցային օրվա ընթացքում:

1.17. Դուք պարտավոր եք Բանկին ներկայացվող հաշվարկային և դրամարկղային փաստաթղթերը լրացնել Բանկում սահմանված ձևին համապատասխան, խստորեն հետևել Համակարգով էլեկտրոնային փաստաթղթերի նախապատրաստման, ձևակերպման և ուղարկման պահանջներին, որոնք շարադրված են Բանկի կողմից տրամադրված փաստաթղթերի փաթեթում:

1.18. Մենք պատասխանատվություն չենք կրում Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակող տեղեկատվության, ինչպես նաև Ձեր կողմից Բանկին տրամադրված այլ տեղեկատվության արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Դուք պարտավոր եք հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները, կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ Դուք փոփոխությունների մասին չեք ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Մենք առաջնորդվում ենք Ձեր նախկինում ներկայացրած առկա փաստաթղթերով: Համակարգում Ձեր լիազորված օգտագործողների կամ վերջիններիս ֆունկցիոնալ գործառույթներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Դուք պետք է Բանկ ներկայացնեք Ձեր լիազոր օգտագործողների նոր Դիմում/Քարտ՝ փոփոխված լիազորված օգտագործողների և/կամ գործառույթների նշումներով, համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությամբ և կնիքով/ առկայության դեպքում/:Դուք երաշխավորում եք Բանկին հատուցել այն վնասները, որոնք պատճառել են Բանկին Ձեր կողմից ծանուցելու պարտավորության խախտման հետևանքով:

1.19. Դուք պարտավոր եք ստուգաբանալիների, գաղտնագրերի, կազմակերպության կնիքի, չեկային գրքույկի և անձի նույնականացման համար Բանկին ներկայացված փաստաթղթերի կորստի դեպքում 24 (քսանչորս) ժամվա ընթացքում տեղեկացնել Բանկին:

1.20. Մենք իրավունք ունենք պահանջել, որ Ձեր կողմից օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը թարգմանվեն հայերեն, օրենքով սահմանված դեպքերում՝ վավերացվեն նոտարի կողմից, ընդ որում՝ Մենք չենք հատուցում թարգմանության և վավերացման ծախսերը:

1.21. Բանկային հաշվի գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

1.22. Մենք պատասխանատու չենք պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման չնախատեսված ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Ձեր վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:

1.23. Դուք պատասխանատվություն եք կրում հաշվով կատարվող գործարքների ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելու, ինչպես նաև հաշիվ բացելու և գործարք կատարելու հիմք հանդիսացած փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների ճշտության համար:

1.24. Դուք կարող եք ստանալ արդիական տեղեկություն Ձեր բանկային հաշիվների դրության և շարժի վերաբերյալ, ինչպես նաև նորություններ և շնորհավորանքներ Բանկի կողմից՝ ստորագրելով Մեր կողմից սահմանված համապատասխան փաստաթղթեր՝ SMS-բանկինգ բջջային կապի միջոցով հեռակառավարման բանկային սպասարկման համակարգին միանալու նպատակով:

1.25. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Մենք և Դուք պատասխանատվություն ենք կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.26. Պայմաններով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

2. Բանկային հաշվի բացման և պլաստիկ քարտի, Բանկ-Հաճախորդ Համակարգի տրամադրման պայմաններ

2.1. Ձեզ համար Մենք բացում ենք բանկային հաշիվներ ՀՀ դրամով և Բանկի կողմից նախատեսված արտարժույթի տեսակներով, և Ձեր դիմումի համաձայն հաշիվներին կից կարող ենք տրամադրել նաև Քարտ:

2.2. Հաշիվը բացվում է սույն Պայմանների 2.9. կետի համաձայն փաստաթղթերի ընդունման և Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում:

2.3. Քարտը տրամադրվում է քարտի տրամադրման հայտի ներկայացումից առավելագույնը 5 բանկային օրվա ընթացքում: Քարտը ստանալու համար անհրաժեշտ է Քարտապանին անձամբ ներկայանալ Բանկ:

2.4. Քարտը համարվում է Բանկի սեփականությունը և Ձեզ է տրամադրվում օգտագործման իրավունքով: Քարտի գործողության ժամկետը սահմանվում է տվյալ պահին Բանկում գործող Սակագների համաձայն:

2.5. Քարտը ստանալուն պես Դուք պետք է ստորագրեք Քարտի դարձերեսին առկա ստորագրության համար նախատեսված դաշտում: Քարտային գործարքների անդորրագրերի Ձեր ստորագրությունը պետք է համապատասխանի Քարտի դարձերեսին առկա ստորագրությանը: Ստորագրության անհամապատասխանությունը կարող է հիմք հանդիսանալ Քարտի սպասարկումը մերժելու համար:

2.6. Բանկ-Հաճախորդ Համակարգի (այսուհետ՝ Համակարգ) Դիմում/Քարտի ներկայացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Բանկը իրականացնում է Ձեր գրանցումը Համակարգում և տրամադրում Ձեզ Համակարգով աշխատելու փաստաթղթերը և համապատասխան հավաստագիրը:
2.7. Համակարգով Մեզ տրամադրվող էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանությունը չարտոնագրված միջամտությունից, ինչպես նաև դրանց հեղինակների ինքնությունը, իսկությունը և ամբողջականությունը ապահովվում է Մեր կողմից Ձեզ փոխանցված հավաստագրով:
2.8. Համակարգում Հաճախորդի լիազորված օգտագործողների աշխատանքային ռեժիմը սահմանվում է Հաճախորդի կողմից և ամրագրվում է Համակարգով աշխատելու Հաճախորդի Դիմում/Քարտում:
2.9. Հաշվի բացման համար Ձեզանից պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Մեր կողմից և կարող է պարբերաբար փոփոխվել:
2.10. Մենք իրավունք ունենք մերժել Ձեր բանկային հաշվի բացումը, եթե՝
- Դուք Բանկ չեք ներկայացրել բանկային հաշվի բացման համար պահանջվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերով,
- Ձեր կողմից ներկայացվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,
- Դուք չեք վճարել բանկային հաշվի բացման համար Սակագներով նախատեսված վճարները (եթե այդպիսիք նախատեսված են),
- Ձեր վերաբերյալ առկա են տեղեկություններ ահաբեկչական գործունեության մեջ ներգրավված լինելու մասին՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի,
- Դուք Բանկ չեք ներկայացրել բանկային հաշվի բացման համար պահանջվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջվում են «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքի պահանջների կատարումն ապահովող Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի համաձայն,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
2.11. Քարտերը կարող եք օգտագործել ՀՀ և արտերկրյա այն առևտրի/սպասարկման և կանխիկացման կետերում, որոնց վրա առկա է VISA լոգոտիպը: Մեր Քարտերը հնարավորություն են ընձեռում՝
– անկանխիկ վճարումներ կատարել և կանխիկ գումարներ ստանալ բանկոմատներում (ATM),
– անկանխիկ վճարումներ իրականացնել առևտրի և սպասարկման կետերում տեղադրված էլեկտրոնային տերմինալների միջոցով,
– հաշվով կանխիկ և անկանխիկ գործարքներ իրականացնել Բանկի տարածքում՝ առանց Քարտի անմիջական օգտագործման,
– վճարումներ և փոխանցումներ իրականացնել նաև ինտերնետի միջոցով:
2.12. Քարտի հետ մեկտեղ, փակ ծրարով Ձեզ է տրամադրվում Քարտի ծածկագիր (PIN), որը կիրառվում է Ձեր անձը նույնականացնելու համար բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: Ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ տրամադրման այլ անձանց: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է Ձեր գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ:
2.13. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Դուք պարտավոր եք Քարտը վերադարձնել Բանկ, կամ ոչնչացնել Քարտը՝ մագնիսական երիզի երկայնքով կտրատելով մասերի:

3. Բանկային հաշվով (այդ թվում նաև Համակարգի միջոցով) գործառնությունների իրականացման պայմաններ

3.1. Բանկային հաշվով գործառնությունները Մենք իրականացնում ենք ՀՀ օրենսդրության, Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի և Պայմանների/Սակագների պահանջներին համապատասխան:
3.2. Մենք պարտավոր ենք ապահովել Ձեզ սպասարկելու կապակցությամբ Մեզ հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների, այդ թվում նաև Բանկ-Հաճախորդ Համակարգով շրջանառվող տեղեկությունների (փաստաթղթերի), գաղտնիությունը: Ձեր, Ձեր հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Ձեզ, ինչպես նաև այլ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.3. Բանկային հաշիվներով գործարքներ կատարելու նպատակով Դուք կամ Ձեր կողմից լիազորված անձը կարող եք դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, կատարել ելքային գործարքներ Մեր բանկոմատների միջոցով, Համակարգով շուրջօրյա ձևավորել ու Բանկին տրամադրել էլեկտրոնային փաստաթղթեր:
3.4. Մենք մեր կողմից սահմանված չափանիշների համաձայն և Ձեր նախնական համաձայնության հիման վրա կարող ենք սահմանափակել Ձեր կողմից իրականացվելիք բանկային հաշվի հետ կապված որոշակի գործառնությունների տեսակներ Բանկային (Մաստեր) հաշիվը բացող մասնաճյուղից տարբերվող բոլոր այլ մասնաճյուղերում:
3.5. Բանկային հաշվով գործառնությունների իրականացման ժամկետները որոշվում են Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններով, Բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթերով կամ իրավական ակտերով:
3.6. Մենք պարտավոր ենք իրականացնել Ձեր հաշվարկա-դրամարկղային համալիր սպասարկումը, այդ թվում՝
- ընդունել և հաշվին հաշվեգրել Ձեր անվամբ ստացվող կանխիկ և անկանխիկ դրամական միջոցները,
- Ձեր կարգադրություններով հաշվում առկա դրամական միջոցների սահմաններում կատարել փոխանցումներ, ինչպես նաև տրամադրել կանխիկ դրամական միջոցներ:
- մշակել էլեկտրոնային վճարման հանձնարարականներ
- Կատարել հաշվարկա-դրամարկղային սպասարկման հետ կապված այլ բանկային գործառնություններ:

3.7. Դուք իրավունք ունեք կարգադրել Մեզ Ձեր բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ Ձեր պարտավորությունների կատարման հետ: Մենք պարտավոր ենք Ձեր կարգադրությամբ (այդ թվում էլեկտրոնային)՝ երրորդ անձանց պահանջով դրամական միջոցներ դուրս գրել հաշվից, եթե կարգադրության մեջ նշված են անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռնում Մեզ՝ համապատասխան պահանջ ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

3.8. Մենք իրավունք ունենք Ձեր հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերում հիմնավորված կասկածներ հայտնաբերելու դեպքում անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.9. Մենք կլորացնում ենք կանխիկ վճարվող դրամական միջոցները հետևյալ կարգով.

3.9.1. ՀՀ 5 (հինգ) դրամից մեծ կամ հավասար գումարները կլորացվում են տասի,

3.9.2. ՀՀ 5 (հինգ) դրամից փոքր գումարները կլորացվում են զրոյի:

3.10. Քարտով կատարված գործարքներն, ինչպես նաև դրանցից բխող բոլոր տեսակի գանձումներն ու միջնորդավճարները Ձեր բանկային հաշվին կարող են հաշվեգրվել գործարքի կատարման օրը կամ ավելի ուշ՝ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված ժամկետներում:

3.11. Արտարժույթի մանրադրամների (մետաղադրամների) բացակայության դեպքում գումարները կլորացվում են մինչև ամենափոքր թղթադրամը, իսկ մնացած գումարը տրամադրվում է ՀՀ դրամով տվյալ պահին ՀՀ արժութային շուկայում տվյալ արտարժույթի նկատմամբ ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում:

3.12. Դուք Մեզ իրավունք եք տալիս անակցեպտ կարգով դրամական միջոցներ դուրս գրել Ձեր՝ Բանկում վարվող հաշիվներից հետևյալ դեպքերում՝

- Բանկի կողմից Ձեր բանկային հաշվին սխալմամբ միջոցների մուտքագրման, ինչպես նաև գերածախսի, դեբիտորական պարտքի առաջացման դեպքում,
- Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների առկայության դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման նպատակով,
- Դատարանի վճռով, այդ թվում՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ ստանալու դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

3.13. Դուք իրավունք ունեք Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած ժամանակ տեղում ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկա-դրամարկղային գործառնությունների սակագներին և այլ հրապարակային տեղեկատվությանը:

3.14. Դուք իրավունք ունեք ինքնուրույն տնօրինել հաշվում առկա միջոցները, տալ Մեզ հաշվարկա-դրամարկղային սպասարկման կարգադրություններ, ինչպես նաև Բանկ-Հաճախորդ Համակարգով շուրջօրյա ձևավորել ու Բանկին տրամադրել էլեկտրոնային փաստաթղթեր:

3.15. Քարտային գործարքը իրականացնելիս Բանկը օգտագործում է Ձեր բանկային հաշվին առկա դրական մնացորդը: Դուք ընդունում եք Քարտով գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Մենք կարող ենք, առանց Ձեր նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել Ձեր բանկային հաշվի գծով գերածախս, արգելափակել Ձեր քարտը՝ գանձելով Սակագներով սահմանված տույժեր (առկայության դեպքում): Գերածախսի առաջացման դեպքում կկիրառվի տույժ՝ համաձայն տվյալ պահին ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի÷ Գերածախսի ծագման դեպքում Ձեր հաշվին մուտքագրվող միջոցները Բանկի կողմից կուղղվեն պարտքի և հաշվարկված տույժերի մարմանը և/կամ Գերածախսի ծագման հաջորդ բանկային օրը գերածախսի գումարները և տույժերը անվերապահորեն և անվիճելի կարգով կգանձվեն հաշվի նվազագույն մնացորդից (առկայության դեպքում): Քարտն արգելափակումից կհանվի տույժերի և/կամ գերածախսի վճարումից հետո:

4. Վճարման հանձնարարականներով, էլեկտրոնային փաստաթղթերով կատարվող գործառնությունների պայմաններ

4.1. Բանկային հաշվով գործարքները, ինչպես նաև այլ բնույթի գործառույթներ իրականացվում են Ձեր կողմից կամ անունից պատշաճ կերպով լրացված Վճարման հանձնարարականների (այդ թվում նաև Համակարգի միջոցով ներկայացված էլեկտրոնային վճարման հանձնարարականների) հիման վրա, էլեկտրոնային ծառայողական ինֆորմացիոն և ծառայողական ֆինանսական փաստաթղթերի կիրառմամբ:

4.2. Ձեր կողմից ներկայացված Վճարման հանձնարարականները/էլեկտրոնային վճարման հանձնարարականները Մենք ընդունում ենք Մեր կողմից սահմանված օրերին և ժամերին: Պատշաճ ձևով ձևակերպված և հաստատված և Մեզ տրամադրված էլեկտրոնային վճարային փաստաթղթերը ունեն իրավաբանական ուժ, նույնական են Մեր և Ձեր կողմից ստորագրված թղթային փաստաթղթերին և հիմք են Ձեր հաշիվներով գործողություններ կատարելու համար:

4.3. Մենք կատարման ենք ընդունում Ձեր Վճարման հանձնարարականը/էլեկտրոնային վճարման հանձնարարականը միայն բանկային հաշվում բավարար միջոցների առկայության պարագայում: Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, այդ միջոցները դուրս են գրվում Ձեր կարգադրությունները և դուրս գրման այլ փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ), իսկ անբավարարության դեպքում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

4.4. Համակարգում Ձեր կողմից պատշաճ ձևով կազմված և հաստատված էլեկտրոնային փաստաթղթերի մշակումը իրականացվում է ավտոմատ եղանակով՝ շուրջօրյա, ընդ որում ՀՀ դրամով և տարադրամով վճարային փաստաթղթերի սպասարկումը, որոնք ընդունվելեն մինչև 16:00-ը, կատարվում է տվյալ բանկային օրը, իսկ 16:00-ից հետո ընդունվածները կարող են կատարվել ինչպես տվյալ, այնպես էլ հաջորդ բանկային օրը:

4.5. Այն դեպքում, երբ Ձեր բանկային հաշվին առկա գումարները բավարար չեն Վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու

համար, Վճարման հանձնարարականը/էլեկտրոնային վճարման հանձնարարականը վերադարձվում է Ձեզ առանց կատարման, ընդ որում՝ Մենք նման դեպքերում պատասխանատվություն չենք կրում Ձեր կարգադրությունը չկատարելու հետևանքով Ձեր կրած վնասների համար:

4.6. Դուք իրավունք ունեք չեղյալ համարել Ձեր կողմից ներկայացված վճարման հանձնարարականը/էլեկտրոնային վճարման հանձնարարականը՝ ամբողջությամբ փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած վնասները, հետ կանչել Բանկ-Հաճախորդ Համակարգով տրամադրված էլեկտրոնային փաստաթղթերը, եթե հետկանչման պահին փաստաթղթերը կատարված չեն Բանկի կողմից:

4.7. Բանկին կատարման տրամադրված էլեկտրոնային վճարային փաստաթղթերի հետ կանչման դեպքում, Դուք պետք է կատարեք հետևյալ գործողությունները `

- Ներկայացնեք Բանկ գրավոր դիմում փաստաթղթի հետ կանչման մասին:
- Համակարգով Բանկ ուղարկեք ծառայողական ֆինանսական փաստաթղթի հետ կանչման մասին:

4.8. Մենք իրավունք ունենք մերժել Ձեր էլեկտրոնային փաստաթղթի հետ կանչման հայտը, եթե էլեկտրոնային փաստաթղթի հետ կանչման հայտի ստացման պահին Մեր կողմից իրականացված էին տվյալ էլեկտրոնային փաստաթղթի կատարման գործողությունները, որոնք անհնարին են դարձնում փաստաթղթի հետ կանչումը:

4.9. Մենք իրավունք ունենք հրաժարվել Ձեր հանձնարարությամբ հաշվարկա-դրամարկղային գործառնությունների կատարումից, եթե Ձեր կողմից խախտվում են ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները, հաշվարկային գործառնությունների իրականացման համար պահանջվող բավարար և անհրաժեշտ հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերը չեն ներկայացվել կամ չեն իրականացվում Պայմանագրով ստանձնած Ձեր պարտավորությունները:

4.10. Համակարգով ձևավորված և իրականացված էլեկտրոնային վճարային փաստաթղթերի արխիվային պահպանումը իրականացվում է Մեր կողմից էլեկտրոնային տարբերակով:

4.11. Մենք պարտավորվում ենք 24 ժամ-ից ոչ ուշ տեղեկացնել Ձեզ պլանավորվող ծրագրային պրոֆիլակտիկ աշխատանքների կամ փոփոխությունների մասին, ինչպես նաև տեխնիկական և ծրագրային խափանումների դեպքում, որոնց արդյունքում տեղի է ունենում էլեկտրոնային փաստաթղթերի մշակման արտապլանային դադարեցում, ֆորսմաժորային հանգամանքների դեպքում, ձեռնարկել միջոցներ Ձեզ տեղեկացնելու համար:

4.12. Անվտանգության խախտման հատկանիշներ հայտնաբերելու կամ Համակարգ չարտոնագրված ներթափանցումների կասկածների, ինչպես նաև պլանային տեխնիկական աշխատանքների իրականացման դեպքում Մենք իրավունք ունենք դադարեցնել Համակարգում Ձեր էլեկտրոնային փաստաթղթերի մշակումը:

4.13. Վճարման հանձնարարականներով /էլեկտրոնային վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումները և վճարման հանձնարարականների/էլեկտրոնային վճարման հանձնարարականների ակցեպտավորումը, ինչպես նաև վճարման հանձնարարականների/էլեկտրոնային վճարման հանձնարարականների կապակցությամբ բազմաբնույթ գործառույթները, որոնք ներառված չեն Պայմաններում իրականացվում է «Վճարման հանաձնարարականներով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումների կատարման առավելագույն ժամկետներ սահմանելու» կարգին համապատասխան, ինչպես նաև Բանկի կողմից ընդունված այլ ներքին իրավական ակտերով:

4.14. Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի/ էլեկտրոնային վճարման հանձնարարականի գումարը Ձեր հաշվին կրեդիտագրվելու մասին Բանկը Ձեզ կտեղեկացնի Ձեր կողմից ընտրված Բանկի հետ հաղորդակցման եղանակով քաղվածքի տրամադրման միջոցով՝ քաղվածքի տրամադրման պայմանների և ժամկետների համաձայն:

5. Բանկային հաշվով և Քարտով կատարված գործարքների քաղվածքների տրամադրման պայմաններ

5.1. Ձեր բանկային հաշվի համար կարող եք ստանալ ամսական քաղվածք՝ Ձեր կողմից բանկային հաշվի բացման դիմումի մեջ նախապես ընտրված եղանակով: Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են տվյալ հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Հաշվի քաղվածքը Ձեզ է տրամադրվում Բանկի աշխատակցի ստորագրությամբ և դրոշմակնիքով՝ Ձեր կողմից ընտրված եղանակով:

5.2. Դուք կարող եք Համակարգով ստանալ քաղվածք Ձեր հաշվից էլեկտրոնային վճարային փաստաթուղթը Բանկին տրամադրելուց հետո՝ սկսած հաջորդ աշխատանքային օրվա ժամը 9:30-ից: Հաճախորդը պարտավոր է համեմատել ստացված քաղվածքը իր կողմից Բանկ ներկայացված էլեկտրոնային վճարային փաստաթղթերի հետ և տարբերություններ հայտնաբերելու դեպքում շտապ պարզաբանել պատճառները հաշիվը սպասարկող աշխատակցի հետ:

5.3. Մենք պարտավոր չենք Ձեզ տրամադրել քաղվածք, եթե հաշվետու ժամանակաշրջանում բացակայում է տվյալ բանկային հաշվով շարժ (հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել):

5.4. Ձեր կողմից քաղվածքի ճշտությունը կարող է վիճարկվել հաշվի քաղվածքը Բանկի կողմից ուղարկելու կամ տրամադրելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ քաղվածքը համարվում է Ձեր կողմից հաստատված: Մեր մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում ուղղումը կատարվում է 2/երկու/ բանկային օրվա ընթացքում: Ուստի խնդրում ենք համեմատել նաև Քարտով գործարքները հավաստող պահպանված վճարային անդորրագրերի տվյալները քաղվածքում արտացոլված գործարքների մանրամասների հետ: Մենք իրավունք ունենք մերժել նշված ժամկետից ուշ ներկայացված բողոքարկման դիմումները:

6. Բանկային հաշվից Սակագներով սահմանված միջնորդավճարների և այլ վճարների գանձման պայմաններ

6.1. Մենք բանկային հաշվի բացման և գործառնությունների իրականացման համար Ձեզանից գանձում ենք վճար (միջնորդավճար)՝ համաձայն բանկային հաշվի բացման/հաշվով գործառնությունների իրականացման օրվա դրությամբ

Բանկում գործող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի համար սահմանված Սակագների (այն դեպքում, եթե նախատեսված է):

6.2. Մենք հաշվարկա-դրամարկղային սպասարկման վճարը, այդ թվում Համակարգի միջոցով կատարված գործարքների համար հաշվից գանձում ենք գործառնության կատարման (ծառայության մատուցման) պահին իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար սահմանված գործող Սակագների համաձայն՝ գործառնության կատարման (ծառայության մատուցման) հետ միաժամանակ:

6.3. Հաշվի օրական մնացորդի նկատմամբ Մենք կարող ենք հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող Սակագներով սահմանված չափով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին հաշվի փաստացի մնացորդը:

6.4. Հաշվի օրական մնացորդի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարները մուտքագրվում են հաշվին յուրաքանչյուր ամսվա վերջում (ոչ ռեզիդենտ Հաճախորդի հաշվի օրական մնացորդի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների մուտքագրումը կատարվում է հարկային պահումները կատարելուց հետո):

6.5. Բանկի կողմից առաջարկվող՝ համապատասխան տեսակի բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքները սահմանվում են Բանկի Սակագներով և հրապարակվում են սույն Պայմանների իմաստով Ձեզ համար հասանելի եղանակով:

6.6. Ձեր անունով մուտք եղած դրամական միջոցները հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում Մենք պարտավոր ենք այդ գումարից տոկոսներ վճարել Ձեզ՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան, բացառությամբ տեխնիկական, ծրագրային խնդիրների առաջացման դեպքերի /անհնարինության:

6.7. Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, բացառությամբ 6.7 կետում նշված դեպքերի, առաջնահերթ անվիճելի (անակցեպտ) կարգով գանձվում են Ձեր ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Ձեր դոլարային հաշվից/ներից, այնուհետև եվրոյով հաշվից/ներից, այնուհետև ռուբլով հաշվից/ներից, իսկ վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Ձեր այլ արտարժույթային հաշվից/ներից, որի դեպքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում: Ընդ որում միևնույն արժույթով հաշիվներից միջնորդավճարների գանձման նախապատվությունը տրվում է ավելի վաղ բացված հաշվին: Սույն կետի ուժով Դուք Մեզ տալիս եք հանձնարարագիր՝ սույն պայմանագրում նշված հաշվից միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները Բանկի կողմից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձվելու վերաբերյալ:

6.8. Հաշիվներից կատարվող փոխանցումների, ինչպես նաև հաշվից կատարվող կանխիկ գործարքի դեպքում միջնորդավճարները առաջնահերթ գանձվում են գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ 6.6 կետում նշված հերթականությամբ (եթե Հաճախորդի հանձնարարականներով/էլեկտրոնային վճարման հանձնարարականներով այլ բան չի նշված):

7. Քարտի օգտագործումը և պահպանումը

7.1. Ձեր Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Մենք, հաշվի առնելով Ձեր բանկային պատմությունը, իրավունք ունենք առանց Ձեր լրացուցիչ կարգադրության վերաթողարկել Ձեր Քարտը, ընդ որում՝ Քարտի վերաթողարկման համար Սակագներով նախատեսված վճարները կգանձվեն Ձեր հաշվից՝ Պայմանների 6.6 կետում նշված կարգով: Այն դեպքում, եթե Քարտը, որի գործողության ժամկետը ավարտվում է տվյալ ամսվա վերջում, չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված Քարտի վերաթողարկման համար անհրաժեշտ պայմանին/ներին (բանկային հաշվի դրական մնացորդի առկայություն/կամ վերջին տարվա ընթացքում գործարքների իրականացում), Բանկն իրավունք ունի Քարտի ժամկետի ավարտման ամսվան նախորդող ամսվա 15-ին ուղարկել SMS – հիշեցում Ձեր կողմից Դիմում-պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին, որի համաձայն Քարտի վերաթողարկման նպատակով Դուք պետք է համալրեք Ձեր բանկային հաշիվը, հակառակ դեպքում՝ Ձեր Քարտը չի վերաթողարկվի: Բանկը չի կրում պատասխանատվություն Ձեր կողմից Դիմումի մեջ նշված սխալ հեռախոսահամարի կամ վերջինիս բացակայության համար: Դուք կարող եք հրաժարվել Քարտի վերաթողարկումից՝ Քարտի գործողության ժամկետի ավարտից առնվազն 40 (քառասուն) աշխատանքային օր առաջ՝ Մեզ գրավոր ծանուցելով:

7.2. Դուք պարտավորվում եք միջոցներ ձեռնարկել Ձեր Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով: Քարտի և ծածկագրի օգտագործման հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը կրում եք Դուք և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ ծածկագրի օգտագործման հետևանքով Ձեր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Բանկի մեղքով:

7.3. Քարտի օգտագործման անվտանգությունն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում՝

ա) Քարտը պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտը մի պահեք էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:

բ) ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին: Խնդրում ենք հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:

գ)չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել Ձեր ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի հակառակ երեսին առկա եռանիշ թվերը (CVV2 կոդը):

դ) եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվել գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս, ինչպես նաև որոշ դեպքերում առևտրային կետերում ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվել միայն վստահելի կայքերից:
ե) բանկոմատներով գործարքներ կատարելիս նախընտրել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի բանկոմատները: Հետևեք, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ձեր ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:
զ) օգտվել Քարտով (նաև բանկային հաշվով) կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցումներ ստանալու Մեր ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ:
7.4. Դուք իրավունք ունեք դիմել Բանկին Ձեր բանկային հաշվին մեկ և ավելի լրացուցիչ Քարտերի կցելու նպատակով: Լրացուցիչ Քարտեր ստանալու համար Դուք պետք է լրացնեք դիմում՝ Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան: Լրացուցիչ Քարտերի գործարքներից առաջացած պարտավորությունների կատարումը Բանկի առջև Ձեր պատասխանատվությունն է:

8. **Քարտի, Համակարգ մուտք գործելու ծածկագրի կորուստը**
8.1. Քարտի կորստի կամ հափշտակության մասին Դուք պետք է անհապաղ տեղեկացնեք Մեզ հետևյալ եղանակներով.
ա) հեռաձայնելով Բանկի + 37410 560 708 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնելով Ձեր Դիմում-պայմանագրի մեջ նշված թվային ծածկագիրը: Մենք կարող ենք պահանջել Ձեր բանավոր կարգադրության գրավոր հաստատում, նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի ստացումից և Ձեր ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է 15 րոպեի ընթացքում: Տեղեկացման պահից 2 (երկու) օրվա ընթացքում Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի դիմում՝ Քարտի կորստի վերաբերյալ,
բ) Բանկի ցանկացած մասնաճյուղ ներկայանալուց և Ձեր անձը հաստատելուց հետո Ձեր Քարտն արգելափակվում է 15 րոպեի ընթացքում:
8.2. Արգելափակումից հետո Ձեր Քարտը հայտնաբերելու դեպքում՝ Դուք պետք է տեղեկացնեք Մեզ այդ մասին: Քարտի գործողությունը կարող է վերականգնվել արգելափակումից հանելու համար սահմանված վճարները գանձելուց հետո (եթե այդպիսիք սահմանված են Սակագներով):
8.3. Ձեր լիազորված օգտագործողի կողմից Համակարգ մուտք գործելու ծածկագրի կամ հավաստագրի կորստյան, ինչպես նաև կասկածների դեպքում Դուք պետք է անհապաղ տեղյակ պահեք Բանկի համապատասխան աշխատակցին՝ Համակարգում օգտագործողի իրավասությունները կասեցնելու նպատակով: Բանկի կողմից տվյալ լիազորված օգտագործողի իրավասությունները վերականգնվում են Ձեր կողմից Բանկին ուղղված գրության հիման վրա: Ծառայության համար Բանկը կարող է գանձել միջնորդավճար, համաձայն տվյալ պահին Բանկում գործող Սակագների:

9. **Քարտերով կատարվող գործարքների օրինականությունը և գաղտնիությունը**
9.1. Քարտերը չեն կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Մենք իրավունք ունենք առանց Ձեզ ծանուցելու չհաստատել գործարքը և/կամ արգելափակել Քարտը: Մենք կարող ենք նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ նախքան գործարքի կատարումը: Քարտային գործարքների մասին Բանկի գրանցումները համարվում են տվյալ գործարքների կատարումը հավաստող փաստաթղթեր:
9.2. Մենք պարտավոր ենք չհրապարակել և երրորդ անձանց չտրամադրել Ձեր վերաբերյալ Մեզ հայտնի դարձած և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Մենք հնարավորություն ենք ընձեռում մեր քարտապաններին ստանալ իրենց Քարտերին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS հաղորդագրություններ /որոշ քարտատեսակների համար անվճար/՝ այդպիսով հնարավորինս կանխելով Քարտերի ապօրինի օգտագործումը: Վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես Դուք պետք է հավաստիանաք, որ գործարքը կատարվել է Ձեր կամ Ձեր կողմից լիազորված անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ: Քարտի ապօրինի օգտագործման դեպքում Դուք պարտավոր եք տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+37410) 560 708 շուրջօրյա հեռախոսահամարով կամ միասնական տեղեկատվական ծառայության 87-87 հեռախոսահամարով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում Ձեր Քարտը կարգելափակվի 15 րոպեի ընթացքում և Բանկը Ձեր դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը:

10. **Ձեր և Մեր հաղորդակցումը**
10.1. Մեր և Ձեր միջև փաստաթղթերի առաքումը (ներառյալ՝ Պայմանների և Սակագների փոփոխությունների մասին Ձեզ ծանուցելն ու հաշվի քաղվածքները Ձեզ տրամադրելը) իրականացվում է գրավոր ձևով՝ Իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի Բանկային հաշվի բացման դիմումի մեջ Ձեր նախընտրած եղանակով:
10.2. Եթե Մեր և Ձեր միջև հաղորդակցումն իրականացվում է փոստային կապի միջոցով, Բանկը պատասխանատվություն չի կրում փաստաթղթերի հանձնման ուշացման կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման համար՝ փոստային ծառայությանը հանձնելու պահից:
10.3. Դուք պարտավոր եք անհապաղ Մեզ ծանուցել Ձեր հասցեի և կապի միջոցների ցանկացած փոփոխության մասին: Նախքան Ձեր ծանուցումը ստանալը՝ Մենք Ձեզ հետ կհաղորդակցվենք Ձեր կողմից նախապես տրամադրված տվյալների հիման վրա:

10.4. Համակարգում խափանումների կամ էլեկտրոնային փաստաթղթերում սխալների առկայության դեպքում Մենք պարտավորվում ենք Համակարգի միջոցով տեղեկացնել Ձեզ առաջացած խնդիրների մասին: Եթե հնարավոր չէ Համակարգը օգտագործել ինֆորմացիոն հաղորդագրություններ ուղարկելու համար, ապա Բանկը առաջացած խնդիրների մասին տեղեկացնում է հեռախոսով:

11. **Ձեր և Մեր պատասխանատվությունը**

11.1. Ձեր Քարտի սպասարկումը ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի միջոցների կիրառում և երրորդ անձանց ծառայությունների օգտագործում: Դուք ընդունում եք, որ Բանկը չի կարող պատասխանատվություն կրել Ձեր Քարտերով իրականացվող գործառնությունների հետևանքով Ձեզ պատճառած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասներն առաջացել են Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ սխալի, անուշադրության հետևանքով:

11.2. Մենք և Դուք կազատվենք միմյանց առջև ստանձնած պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվությունից, եթե խախտումն արդյունք է կապի ընդհատումների, էլեկտրամատակարարման դադարեցման, պետական մարմինների ակտերի, քաղաքացիական հուզումների, երկրաշարժի, հեղեղումների և տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի այլ հանգամանքների ազդեցության:

12. **Պայմանագրի փոփոխության կատարման և լուծման կարգը**

12.1. Մենք իրավունք ունենք միակողմանիորեն փոփոխել Պայմանները և Սակագները:

12.2. Դուք ցանկացած ժամանակ իրավունք ունեք Ձեր դիմումի հիման վրա միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և/կամ դադարեցնել Քարտի/Բանկ-Հաճախորդ համակարգի հետագա սպասարկումը Ձեր կողմից լրացրած դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Մենք կդադարեցնենք Ձեր Քարտի/Բանկ-Հաճախորդ համակարգի գործողությունը՝ մարելով Բանկի հանդեպ Ձեր պարտավորությունները Բանկում Ձեր հաշիվներին առկա գումարներից: Ընդ որում, Պայմանագիրը լուծվում է միայն տվյալ Պայմանագրի շրջանակներում բացված Ձեր հաշիվների փակման դեպքում:

12.3. Մենք իրավունք ունենք չլուծել Պայմանագիրը, եթե Ձեր հաշիվներին առկա գումարները բավարար չեն Բանկի հանդեպ Ձեր ստանձնած պարտավորությունները մարելու համար:

12.4. Մենք իրավունք ունենք միակողմանիորեն լուծել Պայմանագիրը, եթե

- Ձեր հաշվով 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն իրականացվել գործառնություններ, հաշվի մնացորդը զրոյական է, և եթե առկա է հաշվի սպասարկման պարտք, որը հաջորդող 12 (տասներկու) ամիսների ընթացքում չի կարող գանձվել հաշվին/ներին մնացորդի բացակայության պատճառով: Հաշիվների սպասարկման վճարները գանձելիս և հաշիվը/ները փակելիս Մենք առաջնորդվում ենք սույն Պայմանների 6.6 կետում նշված սկզբունքներով:
- Ձեր կողմից խախտվել են Պայմանագրով նախատեսված կետերից որևէ մեկը՝ ոչ ուշ քան 1 (մեկ) ամիս առաջ Ձեզ այդ մասին տեղյակ պահելով:
- Ձեր տվյալներում Բանկի կողմից հայտնաբերվել են ԱՄՆ հարկատուի հատկանիշներ (որոնք են՝ 1) կազմակերպության ստեղծում և հիմնադրում ԱՄՆ օրենսդրության համաձայն, այսինքն՝ «Certificate of incorporation»–ի առկայություն, որը հաստատում է կազմակերպության հիմնադրումը ԱՄՆ օրենսդրության համաձայն, 2) ԱՄՆ-ում հասցեի առկայություն) և Դուք հրաժարվում եք Բանկին տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկատվությունը ԱՄՆ Հարկային ծառայությանը/ ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին տրամադրման համաձայնություն FATCA-ի պահանջների համաձայն:

12.5. Մեր նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում, Մենք դադարեցնում ենք Համակարգում էլեկտրոնային փաստաթղթերի ձևավորումը և կատարումը, գրավոր 10 (տաս) աշխատանքային օր առաջ տեղեկացնելով Ձեզ Պայմանագրի լուծման մասին: Պայմանագիրը համարվում է լուծված տեղեկացման մեջ նշված ժամից և ամսաթվից սկսած:

12.6. Ձեր նախաձեռնությամբ Պայմանագրի լուծումը կատարվում է վերջինիս գրավոր ծանուցման հիման վրա: Պայմանագիրը համարվում է լուծված, Բանկում գրավոր ծանուցման գրանցման և Մեր և Ձեր բոլոր պարտավորությունների կատարման պահից:

12.7. Ձեր նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ձեր հաշիվներին առկա դրամական միջոցների մնացորդը տրվում է Ձեզ կամ փոխանցվում է Ձեր կողմից նշված հաշվին Ձեր դիմումի համաձայն: Հաշիվներից միջոցների փոխանցումները կատարվում են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ» կարգի:

12.8. Մենք իրավունք ունենք դադարեցնել Ձեր կողմից Համակարգով տրամադրված էլեկտրոնային փաստաթղթերի կատարումը, վերջին 6 (վեց) ամիսների ընթացքում Համակարգով կատարված գործարքների բացակայության դեպքում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, պետական ոչ առևտրային կազմակերպությունների բանկային (Մաստեր) հաշվի

1. Բանկային (Մաստեր) հաշվի նկարագրություն, էական դրույթներ

1.1. Բանկային (Մաստեր) հաշիվը բացվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից:

1.2. Բանկային հաշիվը բացվում է Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.3. Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

1.4. Բանկային հաշվը բացվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով, անորոշ ժամկետով:

1.5. Ձեր դիմումի համաձայն Բանկային հաշվին կից կարող են տրամադրվել վճարային քարտեր:

1.6. Քարտը համարվում է Բանկի սեփականությունը և Ձեզ է տրամադրվում օգտագործման իրավունքով: Քարտի գործողության ժամկետը սահմանվում է տվյալ պահին Բանկում գործող Սակագների համաձայն: Քարտերը տրամադրվում են Դիմումը լրացնելու պահից առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում: Քարտը ստանալու համար Քարտապանին պետք է անձամբ ներկայանալ Բանկ:

1.7. Քարտը ստանալուն պես Դուք պետք է ստորագրեք Քարտի դարձերեսին առկա ստորագրության համար նախատեսված դաշտում: Քարտային գործարքների անդորրագրերի Ձեր ստորագրությունը պետք է համապատասխանի Քարտի դարձերեսին առկա ստորագրությանը: Ստորագրության անհամապատասխանությունը կարող է հիմք հանդիսանալ Քարտի սպասարկումը մերժելու համար:

1.8. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Դուք պարտավոր եք Քարտը վերադարձնել Բանկ, կամ ոչնչացնել Քարտը՝ մագնիսական երիզի երկայնքով կտրատելով մասերի:

1.9. Դուք պարտավորվում եք միջոցներ ձեռնարկել Ձեր Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով: Քարտի և ծածկագրի օգտագործման հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը կրում եք Դուք և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ ծածկագրի օգտագործման հետևանքով Ձեր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Բանկի մեղքով:

1.10. Բանկային հաշվով կարող է իրականացվել հետևյալ գործառնությունները՝

- ընթացիկ գործառնությունների իրականացում, այդ թվում դրամական միջոցների փոխանցումներ, անկանխիկ արտարժույթի փոխարկային գործառնություններ:
- ժամկետային ավանդների հետ կապված գործառնությունների իրականացում:
- Բանկում գործող վարկերի տրամադրման, մարման հետ կապված այլ գործառնությունների իրականացում:
- Բանկային հաշվից թույլատրվում են կատարել անսահմանափակ անգամ լրացուցիչ մուտքագրումներ և ելքագրումներ:

1.11. Բանկը Բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրումն և ելքագրումն իրականացնում է մեկ բանկային օրվա ընթացքում:

1.12. Բանկային հաշիվը բացվում է Կազմակերպության ղեկավարի, լիազոր անձի ներկայությամբ՝ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ներկայացմամբ:

1.13. Բանկն իրականացնում է նաև հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնություններ: Հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է փոխարկման գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող Բանկի արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով: Քարտով կատարված գործարքների դեպքում փոխարկում իրականացնելու անհրաժեշտության դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է Բանկի համակարգ գործարքի մուտքագրման պահին գործող Բանկի անկանխիկ փոխարկման փոխարժեքով, անկախ այն հանգամանքից, թե գործարքը քարտով երբ է իրականացնել:

1.14. Հաշվետիրոջ կողմից հաշվով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, առաջնահերթ անվիճելի անակցեպտ կարգով գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի արտարժութային այլ հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում:

1.15. Հաճախորդի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ հարցման ծառայության վճարը գանձվում է Բանկի Սակագներում այդ նպատակով սահմանված միջնորդավճարների համաձայն:

1.16. Բանկը առաջարկում է նաև հեռահաղորդակցման միջոցներով (էլեկտրոնային միջոցներով) հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորություններ՝ «Բանկ-Հաճախորդ» և «SMS Banking»:

1.17. Բանկային հաշվի վրա հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի փոփոխման վերաբերյալ Բանկը Հաճախորդին տեղեկացնում է, վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ: Բանկի կողմից տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին տրամադրված այն վերջինիս իր կողմից ընտրված ճանապարհով հասանելի դառնալու պահից:

1.18. Բանկն իրավունք ունի փակել Հաճախորդի հաշիվը առանց նախնական ծանուցման, եթե Հաճախորդի հաշվով 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն իրականացվել գործառնություններ, հաշվի մնացորդը զրոյական է, և եթե առկա է հաշվի սպասարկման պարտք, որը հաջորդող 12 (տասներկու) ամիսների ընթացքում չի կարող

գանձվել հաշվին/ներին մնացորդի բացակայության պատճառով: Հաշիվների սպասարկման վճարները գանձելիս և հաշիվը փակելիս Բանկն առաջնորդվում է Պայմանագրում նշված սկզբունքներով:

1.19. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել իր հաշիվը և/կամ Բանկային հաշվին կից տրամադրված Քարտը, եթե Հաճախորդն այլևս չի ցանկանում օգտվել Բանկի ծառայություններից և Բանկում չունի այլ հաշիվներ, ավանդներ, վարկեր, որոնք կապակցված են Հաճախորդի տվյալ Բանկային հաշվին:

1.20. Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

2. Հաշվի վարման կարգը

2.1. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակող տեղեկատվության արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Հաճախորդը պարտավոր է հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները, կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ հաճախորդը փոփոխությունների մասին չի ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Բանկն առաջնորդվում է Հաճախորդի նախկինում ներկայացրած առկա փաստաթղթերով: Հաճախորդը երաշխավորում է Բանկին հատուցել այն վնասները (ներառյալ բաց թողնված օգուտը), որոնք պատճառել են Բանկին Հաճախորդի կողմից ծանուցելու պարտավորության խախտման հետևանքով:

2.2. Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրս գրման այլ փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ):

2.3. Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին առկա գումարները բավարար չեն վճարման հանձնարարականը/էլեկտրոնային վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, հայտը վերադարձվում է Հաճախորդին առանց կատարման, ընդ որում Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կարգադրությունը չկատարելու հետևանքով նրա կրած վնասների համար:

2.4. Սակագներով սահմանված վճարները, բացառությամբ 2.5 կետում նշված դեպքերի, առաջնահերթ գանձվում են ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի դոլարային հաշվից/ներից, այնուհետև եվրոյով հաշվից/ներից, այնուհետև ռուբլով հաշվից/ներից, իսկ վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի այլ արտարժութային հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում: Ընդ որում միևնույն արժույթով հաշիվներից միջնորդավճարների գանձման նախապատվությունը տրվում է ավելի վաղ բացված հաշվին:

2.5. Հաշիվներից կատարվող փոխանցումների, ինչպես նաև հաշվից կատարվող կանխիկ գործարքի դեպքում միջնորդավճարները առաջնահերթ գանձվում են գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում 2.4 կետում նշված հերթականությամբ (եթե Հաճախորդի հանձնարարականներով/էլեկտրոնային վճարման հանձնարարականներով այլ բան չի նշված):

2.6. Հաճախորդի կողմից հաշվի մնացորդի ճշտությունը կարող է վիճարկվել հաշվի քաղվածքը Բանկի կողմից ուղարկելու կամ տրամադրելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, հակառակ դեպքում քաղվածքը համարվում է հաստատված Հաճախորդի կողմից: Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում ուղղումը կատարվում է 2 /երկու/ բանկային օրվա ընթացքում:

2.7. Բանկային հաշվի գծով տարեկան տոկոսադրույքների փոփոխությունը կարող է կատարվել Բանկի կողմից՝ միակողմանիորեն: Բանկի կողմից բանկային հաշվին վճարվելիք տոկոսագումարների չափի նվազեցման դեպքում նոր տոկոսադրույքը սկսում է կիրառվել հաճախորդին տոկոսադրույքի նվազեցման մասին ծանուցման պահից 15 օր հետո, եթե Բանկային ավանդի պայմանագրով այլ բան սահմանված չէ:

2.8. Դուք, ստանալով Բանկի սեփականությունը հանդիսացող վճարային համակարգի քարտ, պարտավորվում եք Քարտն օգտագործել խստագույնս պահպանելով Քարտից օգտվելու կարգի, «Միջազգային և լոկալ վճարային համակարգերի պլաստիկ քարտերի սպասարկման և թողարկման մասին» կարգի դրույթները, չտրամադրել Քարտը, քարտային տվյալները և PIN կոդը այլ անձանց, թույլ չտալ գերածախս, վճարել Քարտի սպասարկման համար միջնորդավճարները (առկայության դեպքում):

2.9. Քարտի կորստի դեպքում Դուք անմիջապես պետք է տեղյակ պահեք Բանկի պրոցեսինգային կենտրոնին +(374 10) 56-07-08 հեռախոսահամարով կամ միասնական տեղեկատվական ծառայության 87-87 հեռախոսահամարով, տեղեկացման պահից 2 (երկու) օրվա ընթացքում Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի դիմում՝ Քարտի կորստի վերաբերյալ:

3. Տեղեկատվություն բանկային (Մաստեր) հաշվի սակագների վերաբերյալ

Ծառայություն	Սակագին
Հաշվի բացում	
Հաշվի բացում	**Անվճար**
Հաշվին կից Visa Business քարտի տրամադրում	
Քարտի տրամադրում	**Անվճար**
Քարտի տարեկան սպասարկում	**15000 ՀՀ դրամ**
Հաշիվների սպասարկում	
Հաշվի տարեկան սպասարկում*	**5000 ՀՀ դրամ**
Նվազագույն մնացորդ	
Նվազագույն մնացորդ	**Չի պահանջվում**
Հաշվի փակում	
Հաշվի փակում	**Անվճար**
"Բանկ-հաճախորդ" համակարգով մատուցվող ծառայություններ	
Համակարգի տեղադրում, ուսուցում և խորհրդատվություն	**Անվճար**
Համակարգի ամսական սպասարկման վճար	5000 ՀՀ դրամ
ՊՈԱԿ և ՀՈԱԿ-ների (դպրոցներ, մանկապարտեզներ, քոլեջներ, ուսումնարաններ, վարժարաններ) հաշիվների ամսական սպասարկման վճար	**Անվճար**
Համակարգը միայն "հաշվի դիտման" հնարավորությամբ	**Անվճար**
Հաշվետիրոջ կողմից անվտանգության կանոնների խախտում, անվտանգության նոր սերտիֆիկատի տեղադրում կամ այլ պատճառով Բանկի կողմից մասնագետի այցելություն	5000 ՀՀ դրամ
Հավելյալ ծառայություններ	
ՀՀ դրամով բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան պարզ տոկոսադրույք,	0.01% - 1%
Արտարժույթով բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան պարզ տոկոսադրույք	0.01%
Չեկային գրքույկի տրամադրում	3000 ՀՀ դրամ
SMS Բանկինգ ծառայության ակտիվացում	անվճար
SMS Բանկինգ ծառայության ամսական միջնորդավճար	190 ՀՀ դրամ
Տեղեկատվական ծառայություններ	
Առձեռն տրամադրում բանկի տարածքում	
Հաշվի քաղվածք	
ամսական	**Անվճար**
Վճարման հանձնարարականի SWIFT հաղորդագրության պատճե	1000 ՀՀ դրամ
Քաղվածքի, կատարված գործարքի փաստաթղթի պատճեն՝ ներառյալ ավանդային, վարկային հաշիվների	
մինչև 1 տարի վաղեմության	2000 ՀՀ դրամ
1-3 տարի վաղեմության	3000 ՀՀ դրամ
3 տարուց ավելի վաղեմության	5000 ՀՀ դրամ
Այլ տեղեկանքներ	3000 ՀՀ դրամ
Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում և տրամադրում	10 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր պաշտոնական հարցման համար

*Պետական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվի տարեկան սպասարկումն անվճար է
*Մի քանի հաշիվ ունենալու դեպքում սպասարկման վճարը գանձվում է միայն մեկ դրամային և միայն մեկ արտարժութային հաշվի համար

4. Վեճերի լուծման կարգը

4.1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: